

ազատագրութեան համար։ Ամենահետաքրքրականը, սակայն, եօդէ ֆի Դիցգենի — գերմանացի առաջին գիտնական-փիլիսոփայ բանուորի — ընսադատութիւնն էր «կապիտալի» մասին վերո-յիշեալ թերթի մէջ։ Այդ հանգամանքը շատ ուրախացրեց Մարքսին, որ սովորութիւն ունէր Դիցգենին «մեր փիլիսո-փան» անուանելու։

Ամենամեծ բարոյական վարձատրութիւնը, որ ունեցաւ Մարքսը, այն սիրալիր ընդունելութիւնն էր, որ գտաւնրա «կա-պիտալը» բանուորական մասուլի կողմից։

Բ. Իշխաննեան

(Կը շաբանակուի)

ՔՆՆԵԴԻՇՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՃՑԵՆՑԽՕՍՈՒԹԻՒՆ

Քաղաքական-ողցիալիստական բրոշիւրների երեք կուս. հրա-
տարակութիւններ։

Վերջին ժամանակներս աչքի է ընկնում քաղաքատնտե-
սական և սոցիալական հարցերի վիրաբերեալ բրոշիւրնե-
րի բաւական մեծաքանակ հրատարակութիւններ և հայրերիս
մէջ։ Չգիտենք նր աստիճան են տարածւում այդ բրոշիւրները
մեր ժողովրդի մէջ, սակայն ինքը երևոյթը կապ ունի վերջին
տարուայ հասարակական-քաղաքական շարժման հետ։ Այդ հրա-
տարակութիւններին զարկ են տալիս մեզանում երեք յեղ. կազ-
մակերպութիւններ. 1) Դաշնակութիւնը, 2) Սոց. Դեմ. Բան.
Հայ Կաղմ. («Կեանք») և 3) Ռ. Ս.-Դ. Բ.Կ.-եան հայերը («Կայծ»):
Եւ բնականաբար այդ գործունէութիւնն էլ աւելի մեծ ծաւալ
կարող է ստանալ այն կազմակերպութիւնը, որ դրամական կողմից
անհամեմատ հարուստ է բոլոր միւս յեղ. կուսակցութիւններից։
Յամենայն դէպս այդ հրատարակչական մրցութիւնից ընթերող
հասարակութիւնը կարող է միայն օգտուել։

«Դաշնակցութեան» հրատարակած բրոշիւրներն են. 1) Խուս.
Զեմստվո և Կովկասի պահանջները, 2) Թէ ինչով են կուտու

գիւղացիները իրանց կարիքների համար, 3) Սարդեր և ճանճեր, Լիբէնեխտի, 4) Հարուստները և Աղքատները, Բախի, 5) Հայ, Լոյս և Ազատութիւն, Պեշիոնովի, —«Եւսնըի» հրատարակութիւններ են. 1) Տնտեսական Զարգացման ֆազիերը, Բ. Իշխ. 2) Ընդհանուր ընտրողական իրաւունքը Արևմուտքում, Վուդովովսկի. 3) Աւարիայի ծգնաժամը, Կառլիկի, Նորմալ 4) բանուորական օր, Զեյդէլի, 5) Մարքսի յաւելեալ արժեքը, Շտերնի. «Կայջի» հրատարակութիւններն են 1) Կառլիկու «Հայրենասիրութիւրը» և 2) Բրակէի «Կորչեն Սոց.-Դեմոկրատները»:

Այդ բրոշիւրների մէջ նկատում է աշխատանքի հապճապութիւն, լեզուի արուեստակեալ, «ինտելիգենտ» կազմութիւն, որ հազիւ թէ դիւրացնի բուն ժողովրդի ընթերցանութիւնը. Պէտք է ասել որ փոքր ի շատէ ինտելիգենտ ընթերցողները մեղանում այդ տեսակ բրոշիւրների հետ ծանօթ են լինում արդէն ոռւսերէնով, հետևաբար թարգմանողները պէտք է ի նկատի ունենան մեր հասարակ գրագէտ մասսան, իսկ նրա հետ զրոյց անելիս պէտք է աւելի պարզ, ժողովրդական դարձուածներով միտքը արտայայտել. մի բան որ ի հարկէ աւելի մեծ աշխատանք է պահանջում քան մեքենայական թարգմանութիւնը «ինտելիգենտ» ոճով: Խնդիրը բրոշիւրների քանակի մէջ չէ, այլ և որակի:

Մ.

Աւրաբես, Հաղափրութիւնը Կովկասում, հեռազօտութիւն, Ալէքսանդրապուլ, 1906, գ. 10 կ.

Այս գրքոյկում հեղինակը նպատակ է դրել ռամփոփել թէ ինչ վիճակում էր հողատիրութիւնը Կովկասում Խօլամի տիրապետութեան ժամանակ և ինչ վիճակի ենթարկուեց ոռւսական տիրապետութիւնից յետոյց: Բրոշիւրի տենդենցը այն է որ թուրք բէզերը, խաները և աղալարները, օգտուելով ոռւս կառավառութեան անտեղեակութիւնից, իրանց հողերի «կալուածատէրեր» և գիւղացիների «ճորտատէրեր» դառան, մինչդեռ իսլամի օրէնքով հողը համայնական է և հողը պիտի ճանաչել պետական, բաժանել երկրագործ դասակարգին առանց որևէ վարձատրութեան: Հետազօտութեան փաստական մասը թոյլ է: Ազրարային հարցը տեղական կոմիտէտներում վճռելիս այս հետազօտութիւնը կարող է պարզել մի քանի կէտեր:

Մ.